Հանրապետական մանկավարժահոգեբանական կենտրոն

«Հանրակրթական դպրոցների ուսուցիչների և ուսուցչի օգնականների դասավանդման հմտությունների զարգացման ապահովում» ծրագիր

ՀԵՏԱԶՈՏԱԿԱՆ ԱՇԽԱՏԱՆՔ

Դպրոց՝ <<ՀՀ Գեղարքունիքի մարզի Սևան քաղաքի N 4 հիմնական դպրոց>> ՊՈԱԿ

Թեմա՝ <<Թեստը որպես ուսուցման արդյունքների ստուգման և ձևավորող գնահատման միջոց>>

Վերապատրաստող, մենթոր՝Արմենուհի Մելքոնյան

Ուսուցիչ՝Ամալյա Գևորգյան

2023

ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹՅՈՒՆ

ՆԵՐԱԾՈՒԹՅՈՒՆ.....3

Գլուխ1. Ձևավորող գնահատումը որպես ուսուցիչների և սովորողների համատեղ գործունեության միջոց 5

Գլուխ 2 12

ԹԵՍՏԸ ՈՐՊԵՍ ՈՒՍՈՒՑՄԱՆ ԱՐԴՅՈՒՆՔՆԵՐԻ 12

ՍՏՈՒԳՄԱՆ ԵՎ ԳՆԱՀԱՏՄԱՆ ՄԻՋՈՑ.....12

Գլուխ 3 16

Հայտորոշիչ թեստ.....16

Եզրակացություն.....23

Օգտագործված գրականության ցանկ.....24

ՆԵՐԱԾՈՒԹՅՈՒՆ

Թեստն ի հայտ է եկել 20-րդ դարասկզբին և կիրառվել հոգեբանության, սոցիոլոգիայի և մանկավարժության ոլորտներում: Այն ծառայել է որոշակի հոգեբանական կամ սոցիոլոգիական հետազոտություններ կատարելուն: Ավելի ուշ ամերիկացի մանկավարժներն սկսեցին թեստը կիրառել որպես սովորողների ձեռք բերած գիտելիքների, դրանց ընկալման և կիրառության ստուգման ձև: Թեստ բառը անգլերենում նշանակում է փորձարկում կամ ստուգում: Քանի որ հայերենի հարցարան բառով ընդունված է անվանել ուսուցչությանը քաջածանոթ առաջադրանքի մի այլ ձև, որի մասին խոսք կլինի ստորև, այդ պատճառով էլ պահպանում ենք ստուգման այդ ձևի օտար անունը: Թեստը տարբերվում է այլ կարգի ուսուցանող կամ ստուգման նպատակով հանձնարարվող առաջադրանքներից, հարցաշարերից, դասագրքային հարցադրումներից: Թեստը կիրառվում է որպես ուսուցման արդյունքների ստուգման և ձևավորող գնահատման արագ, արդյունավետ, անաչառ մի ձև, որը հարմար է կարճ ժամանակահատվածում շատ մարդկանց ստուգելու և գնահատելու համար՝ հենվելով սովորողի մտածողության տեսակի,ուսումնառության ոճի վրա և մշակվում են դրանք բարելավելու,հաղթահարելու ուղիներ: Դրա դերը հատկապես մեծանում է համակարգչով ինքնաստուգում և ինքնավերահսկողություն իրականացնելու ժամանակ:

Թեմայի **արդիականությունը** պայմանավորված է նրանով,որ այն խիստ արդիական է և դեռևս ոչ այնքան յուրացված մանկավարժական համայնքի կողմից:

Հետազոտական աշխատանքի նպատակն այն է,որ կարողանանք բացահայտել թեստը որպես ուսուցման արդյունքների ստուգման և ձևավորող գնահատման միջոց,հատկապես հայտորոշիչ թեստը,նրա ազդեցությունը նյութի յուրացման բարելավման վրա:

Հետազոտության նպատակից բխող խնդիրները.

. ուսումնասիրել թեմային առնչվող գիտաուսումնական գրականությունը,

. նպաստել հայտորոշիչ թեստի միջոցով աշակերտների կողմից խորը գիտելիքների ձեռքբերմանը,

. զարգացնել ճանաչողական գործունեությունը:

Իրականացման մեթոդները.

. հիմնախնդրին վերաբերող մեթոդական գրականության ուսումնասիրումը,

. դասերի վարում,

. մանկավարժական փորձարարություն:

Գլուխ1. Ձևավորող գնահատումը որպես ուսուցիչների և սովորողների համատեղ գործունեության միջոց

Գնահատման մասին խոսելիս պետք է հաշվի առնել հանրակրթության պետական նոր չափորոշչով նախասահմանված ուսումնառության արդյունքների գնահատման սկզբունքները. պետական չափորոշիչը ձևավորող հանրակրթական հիմնական ծրագրերի բաղադրիչներից մեկն էլ սովորողների գնահատման ձևերն են: Ինչպես գիտենք՝ հանրակրթական դպրոցներում ընթացիկ գնահատումն իրականացվում է 2 եղանակով՝ քանակական /միավորային/ և ձևավորող/ուսուցանող/:

Ձևավորող գնահատումը ուսումնական գործընթացում ուսուցիչների և սովորողների համատեղ գործունեություն է, որի ընթացքում դիտարկվում են յուրաքանչյուր սովորողի ուսումնառության ընթացիկ արդյունքները, խնդիրներն ու դժվարությունները, այնուհետև՝ հենվելով սովորողի մտածողության տեսակի, ուսումնառության ոճի վրա՝ մշակվում են դրանք բարելավելու, հաղթահարելու ուղիներ:

Ձևավորող գնահատումը ուսուցչին թույլ է տալիս.

- հստակ ձևակերպել յուրաքանչյուր կոնկրետ դեպքում գնահատվելիք կրթական արդյունքը և կազմակերպել իրենց աշխատանքը դրան համապատասխան
- աշակերտին դարձնել ուսումնական և գնահատման գործունեության առարկա
- կարող է օգնել սովորել սխալներից
- կարող է օգնել հասկանալու, թե ինչն է կարևոր
- կարող է օգնել հասկանալ, թե ինչ են անում
- կարող է օգնել բացահայտել այն, ինչ նրանք չգիտեն
- կարող է օգնել բացահայտել այն, ինչ նրանք չեն կարող անել

Ձևավորող գնահատումը հիմնված է չափանիշների և հենանիշերի վրա: Չափանիշների վրա հիմնված գնահատման համակարգը պետք է հնարավորություն տա որոշել, թե որքանով է հաջողությամբ յուրացվել որոշակի ուսումնական նյութ, որոշել, թե արդյոք ձևավորվել է որոշակի գործնական հմտություն, ստուգեք սովորողի ձեռք բերած մակարդակը, որը դրված է ուսումնական առաջադրանքում:

Ժամանակակից մանկավարժությունը ձևավորող գնահատումը համարում է սովորողներին տրամադրվող տեղեկատվական հետադարձ կապ, այն կիրառվում է ամբողջ դասընթացի ընթացքում՝ շարունակաբար ստուգելով՝ արդյո՞ք ուսումնառություն եղե՞լ է, թե՝ ոչ: Եթե այո՝ ապա ի՞նչը/ինչե՞րն են նպաստել դրան: Եթե ոչ՝ ինչո՞ւ և ինպե՞ս պետք է կազմակերպվի վերաուսուցումը:

Ինչպես նշվեց՝ նոր հպչ-ի գնահատման համակարգում առանձնահատուկ կարևորություն է տրվում ձևավորող գնհատմանը, հետևաբար՝ մեծ թափով ուսումնասիրվում և առաջարկություններ են արվում այս բնագավառում: Այդ նպատակով ԿԶՆԱԿ- ը ուսումնասիրել և ուսուցչի սեղանին է ներկայացնում գնահատման հետևյալ բաղադրիչները և բազմատեսակ սանդղակներ՝ տարատեսակ կարողություններ գնահատելու համար:

Ըստ ԿԶՆԱԿ-ի մասնագետների՝ ձևավորող գնահատումը ուսուցչի կողմից գնահատման 5 բաղադրիչների պլանավորված և պարբերական օգտագործումն է ամենօրյա աշխատանքում:

- Ուսուցչի կողմից արդյունավետ հետադարձ կապի ապահովում:
- Սովորողների ակտիվ մասնակցություն սեփական ուսումնառության գործընթացին:
- Ուսուցման գործընթացի ճշգրտում և շտկում՝ հաշվի առնելով գնահատման արդյունքները:
- Գնահատման՝ սովորողների մոտիվացիայի և ինքնագնահատականի վրա խորքային ազդեցության գիտակցում, որն իր հերթին կարևոր ազդեցություն ունի ուսուցման արդյունավետության վրա:
- Սովորողների կողմից իրենց գիտելիքները ինքնուրույն գնահատելու ունակության ձևավորում:

Ստորև ներկայացնում ենք ԿԶՆԱԿ հիմնադրամի գնահատման բաժնի ստուգաթերթերից մի քանիսը:

Սովորողների հմտությունների և վերաբերմունքի գնահատման ստուգաթերթ (ՁԳ)

Ներկայացնում ենք ձևավորող գնահատում իրականացնող ուսուցչի դիտարկման թերթիկի օրինակ, որը կարելի է կիրառել տարբեր ուսումնական փուլերի համար և տարբեր նպատակներով: Այս տարբերակը մշակվել է սովորողների տարբեր

հմտությունների և վերաբերմունքների ձևավորման ընթացքը դիտարկելու և ի վերջո՝ գնահատելու համար: Ուսուցիչը ազատ է ընտրության մեջ, կարող է ընտրել չափանիշները՝ անհրաժեշտ դիտարկման ենթակա հմտություններն ու վերաբերմունքները՝ կախված ուսումնական փուլի նպատակներից:

ՁԵՎԱՎՈՐՈՂ ԳՆԱՀԱՏՄԱՆ ՍՈՒԳԱԹԵՐԹ

ՎԵՐԱԲԱՐԿԱՑԱԿԱՆ ՎԵՐՋՆԱՐԴՅՈՒՆՔՆԵՐ	ԱՆՈՒՆ, ԱԶԳԱՆՈՒՆ									
	Մակարդակ 1	Մակարդակ 2	Մակարդակ 3	Մակարդակ 4	Մակարդակ 5	Մակարդակ 6	Մակարդակ 7	Մակարդակ 8	Մակարդակ 9	Մակարդակ 10
ՀՄՏՈՒԹՅՈՒՆՆԵՐ										
Առաջարկում է նոր մտքեր:	****									
Հարցերով ճշտում է հասկացածը:	*	*								
Պատրաստակամ կատարում է հանձնարարությունները:		***								
Բացատրում է մյուսներին:	***									
Եզրակացություններ է անում:	**									
Խրախուսում և ոգևորում է ընկերներին:		****								
Համագործակցում է բոլորի հետ:		**								
Տեղեկություններ է հավաքում:	***	***								
Պահանջկոտ է իր և ընկերների հանդեպ:	***									
Պատասխանատու է, ենթարկվում է ընդունված կանոններին:		*****								
Անաչառ է գնահատում իրեն:	***									
Անաչառ է գնահատում ընկերներին:	**									
Կարողանում է լսել:		***								
Արագ է կողմնորոշվում:	***									
ՎԵՐԱԲԵՐՄՈՒՆՔ/ԴԻՐՔՈՐՈՇՈՒՄ										
Հաճույքով աշխատում է թե՛ տղաների, թե՛ աղջիկների հետ:	***	******								
Ուշադիր է տարածքի մաքրությանը:	*	***								
Հոգատար և սրտացավ է ընկերների հանդեպ:		***								
Բարի է և արդարության սուր զգացողություն ունի:	***									
Պահպանում է բնությունն ու կենդանիներին:		*****								
Հոգատար է և ճանաչում է իր համայնքը:		**								
Հարգալից է ուսուցիչների և մեծերի հանդեպ:		*****								
Ունի խնայող վերաբերմունք:		***								

Գնահատման մասին խոսելիս պետք է հաշվի առնել հանրակրթության պետական նոր չափորոշչով նախասահմանված ուսումնառության արդյունքների գնահատման սկզբունքները. պետական չափորոշիչը ձևավորող հանրակրթական հիմնական ծրագրերի բաղադրիչներից մեկն էլ սովորողների գնահատման ձևերն են: Ինչպես գիտենք՝ հանրակրթական դպրոցներում ընթացիկ գնահատումն իրականացվում է 2 եղանակով՝ քանակական /միավորային/ և ձևավորող/ուսուցանող/:

Ձևավորող գնահատումը ուսումնական գործընթացում ուսուցիչների և սովորողների համատեղ գործունեություն է, որի ընթացքում դիտարկվում են յուրաքանչյուր սովորողի ուսումնառության ընթացիկ արդյունքները, խնդիրներն ու դժվարությունները, այնուհետև՝ հենվելով սովորողի մտածողության տեսակի,

ուսումնառության ոճի վրա՝ մշակվում են դրանք բարելավելու, հաղթահարելու ուղիներ:

Ձևավորող գնահատումը ուսուցչին թույլ է տալիս.

- հստակ ձևակերպել յուրաքանչյուր կոնկրետ դեպքում գնահատվելիք կրթական արդյունքը և կազմակերպել իրենց աշխատանքը դրան համապատասխան
- աշակերտին դարձնել ուսումնական և գնահատման գործունեության առարկա
- կարող է օգնել սովորել սխալներից
- կարող է օգնել հասկանալու, թե ինչն է կարևոր
- կարող է օգնել հասկանալ, թե ինչ են անում
- կարող է օգնել բացահայտել այն, ինչ նրանք չգիտեն
- կարող է օգնել բացահայտել այն, ինչ նրանք չեն կարող անել

Ձևավորող գնահատումը հիմնված է չափանիշների և հենանիշերի վրա: Չափանիշների վրա հիմնված գնահատման համակարգը պետք է հնարավորություն տա որոշել, թե որքանով է հաջողությամբ յուրացվել որոշակի ուսումնական նյութ, որոշել, թե արդյոք ձևավորվել է որոշակի գործնական հմտություն, ստուգեք սովորողի ձեռք բերած մակարդակը, որը դրված է ուսումնական առաջադրանքում:

Ժամանակակից մանկավարժությունը ձևավորող գնահատումը համարում է սովորողներին տրամադրվող տեղեկատվական հետադարձ կապ, այն կիրառվում է ամբողջ դասընթացի ընթացքում՝ շարունակաբար ստուգելով՝ արդյո՞ք ուսումնառություն եղե՞լ է, թե՝ ոչ: Եթե այո՝ ապա ի՞նչը/ինչե՞րն են նպաստել դրան: Եթե ոչ՝ ինչո՞ւ և ինպե՞ս պետք է կազմակերպվի վերաուսուցումը:

Ինչպես նշվեց՝ նոր հպչ-ի գնահատման համակարգում առանձնահատուկ կարևորություն է տրվում ձևավորող գնհատմանը, հետևաբար՝ մեծ թափով ուսումնասիրվում և առաջարկություններ են արվում այս բնագավառում: Այդ նպատակով ԿԶՆԱԿ- ը ուսումնասիրել և ուսուցչի սեղանին է ներկայացնում գնահատման հետևյալ բաղադրիչները և բազմատեսակ սանդղակներ՝ տարատեսակ կարողություններ գնահատելու համար:

ՍՏՈՒԳԱԹԵՐԹ
ՄԱՅՐԵՆԻ, 2-րդ դասարան

Վերջնարդյունքներ	ԱՆՈՒՆ, ԱԶԳԱՆՈՒՆ									
	Սովորող 1	Սովորող 2	Սովորող 3	Սովորող 4	Սովորող 5	Սովորող 6	Սովորող 7	Սովորող 8	Սովորող 9	Սովորող 10
Կարդում է հեգելով:										
Կարդում է վանկերով:										
Կարդում է բառերով:		**								
Ընթերցում է ծանոթ արձակ տեքստեր:										
Ընթերցում անծանոթ արձակ տեքստեր:	*									
Ընթերցում ծանոթ չափածո տեքստեր (հանելուկ, բանաստեղծություն):		*								
Ընթերցում անծանոթ չափածո տեքստեր (հանելուկ, բանաստեղծություն):										
Հասկանալով ընթերցում է արձակ և չափածո պարզ տեքստեր:										
Պատասխանում է կարդացածի վերաբերյալ հարցերին:										
Ձևակերպում է հարցեր ընթերցածի հիմնական բովանդակության վերաբերյալ:	**									
Ճիշտ և հասկանալով ընթերցում է ոչ գրական պարզ տեքստեր:										
Վերլուծում է ընթերցած տեքստի բովանդակությունը:										
Վերլուծում է ընթերցած տեքստի բովանդակությունը, արտահայտում է իր տեսակետը:										
Բարձրաձայն կարդում է բոպեում 30 բառից ավելի:										
Բարձրաձայն կարդում է բոպեում մինչև 30 բառ:										
Մտքում կարդում է 40 բառից ավելի:	***									
Մտքում կարդում է մինչև 40 բառ:	**									

Ընթերցանության արդյունավետությունը զարգացնելու, սովորողներին որևէ պահանջ ներկայացնելուց առաջ պետք է նրան բացատրել ընթերցելու անհրաժեշտությունն ու կարևորությունը: Ընթերցանությունը կրթության բովանդակային մաս դիտելուց առաջ այն պետք է կարևորել որպես մարդու մտագործունեության էական բաղադրիչ: Հետևաբար՝ սովորողի հետ պետք է ազնիվ լինել և նրան նախապես ներկայացնել ընթերցող մարդու վերջնարդյունքները. ոչ միայն չափորոշչային պահանջներով, այլև նրա՝ որպես անձի ձևավորման ելակետ: Ընթերցումը ափոխարինելի միակ հմտությունն է, որը ազդում է մտածողության զարգացման վրա: Այն ոչ միայն հաճելի ժամանակ անցկացնելու, վերլուծական կարողություններ զարգացնելու միջոց է, այլև մարդու ամբողջական զարգացման նախապայման:

Ներկայիս հետազոտությունները ցույց են տալիս, որ ձեռքբերված գիտելիքները պարզապես երկարաժամկետ հիշողության մեջ պահվող հասկացությունների և ընթացակարգային հմտությունների հավաքածու չեն: Ավելի շուտ՝ գիտելիքը կառուցված է անհատների կողմից իմաստալից ձևերով, որոնք աճում և փոխվում են ժամանակի ընթացքում:

2020 թվականի մարտի ուսումնասիրությունը ցույց տվեց, որ ձևավորող գնահատման պաշտոնական ապացույցների տրամադրումը, ինչպիսիք են գրավոր հետադարձ կապը և վիկտորինաները ուսումնական ստորաբաժանումների ներսում կամ միջև, օգնեցին բարձրացնել ձևավորող գնահատումների արդյունավետությունը:

Ձևավորող գնահատման որոշ օրինակներ ներառում են.

. Պորտֆոլիոներ

. Խմբային նախագծեր

. Առաջընթացի հաշվետվություններ

. Դասարանային քննարկումներ

. Մուտքի և ելքի տոմսեր

. Կարճ, սովորական վիկտորինաներ

. Վիրտուալ դասարանի գործիքներ, ինչպիսիք են՝ Socrative-ը կամ Kahoot-ը:

. Գնահատման էական տարրերը

Ինչու՞ ենք գնահատում.

. արձանագրելու արդյունքները,

. խթանելու ուսումնառությունը:

Ի՞նչն ենք գնահատում.

. ուսումնառության արդյունքները,

. ուսուցման և ուսումնառության գործընթացը:

Ինչպե՞ս ենք գնահատում.

. բնութագրելով:

Ե՞րբ ենք գնահատում.

- սկզբում (նախնական, հայտորոշիչ գնահատում)

- ընթացքում (ձևավորող գնահատում)

ՀԻՄՆԱԿԱՆ ԳՈՐԾԱՌՈՒՅԹՆԵՐԸ

- ուսուցանող
- կարգավորող
- դաստիարակող
- զարգացնող

Ընդհանրացնելով՝ կարող ենք ասել, որ ձևավորող գնահատումն օգնում է ուսուցիչներին հասկանալ աշակերտի ուսուցումը, և նրանց տրամադրում տեղեկատվություն՝ համապատասխանաբար հարմարեցնելու իրենց ուսուցման ռազմավարությունները:

Դասի յուրաքանչյուր փուլում ուսուցիչը ժամանակ առ ժամանակ հարցերի, դիտարկումների միջոցով պետք է ստուգի, թե արդյոք սովորողները չեն շեղվել նախատեսված նպատակներին տանող ուղուց:

Մեր դասերին ձևավորող գնահատում կիրառելիս մենք օգտագործում եմ գնահատման այնպիսի ձևեր, ինչպիսիք են ինքնագնահատումը, փոխադարձ գնահատումը: Գնահատելով միմյանց՝ աշակերտները կարևորում են կատարված աշխատանքի դրական և բացասական կողմերը՝ դրանով իսկ ամրապնդելով ուսումնասիրված նյութը: Ինքնագնահատման ժամանակ աշակերտները հետևում և վերանայում են իրենց առաջընթացը: Սկզբնական փուլում գնահատման այս ձևերը բավականին բարդ են աշակերտների համար: Հաճախ աշակերտները օբյեկտիվորեն չեն գնահատում միմյանց և իրենց: Ուստի ինքնագնահատում և փոխադարձ գնահատում իրականացնելիս շատ կարևոր է ունենալ գնահատման չափանիշներ:

Ձևավորող գնահատումը ուսուցչի և աշակերտների միջև հետադարձ կապի շարունակական գործընթաց է: Հետադարձ կապը կարող է լինել բանավոր և գրավոր, պաշտոնական և ոչ պաշտոնական: Սա աշակերտի ձեռքբերումների մասին տեղեկատվության ստացման շարունակական գործընթաց է:

Աշակերտների ձեռքբերումները գնահատելու նոր մոտեցումների կիրառումը նպաստում է սովորողների մոտ ուսման մոտիվացիայի բարձրացմանը, կրթական անկախության հմտությունների ձևավորմանը և սեփական ուսման համար պատասխանատվությու

Գլուխ 2

ԹԵՍՏԸ ՈՐՊԵՍ ՈՒՍՈՒՑՄԱՆ ԱՐԴՅՈՒՆՔՆԵՐԻ ՍՏՈՒԳՄԱՆ ԵՎ ԳՆԱՀԱՏՄԱՆ ՄԻՋՈՑ

Ուսումնառության ընթացքում իրականացվող գնահատումը գործընթաց է, որով բացահայտվում և վերլուծությունների միջոցով վեր հսկվում են ուսուցման արդյունքները և դրանց համապատասխանությունը պետական կրթական չափորոշչի պահանջներին:

Գնահատումը շարունակական, անընդհատ գործընթաց է: Այն կազմված է քանակական և որակական գնահատումներից:

Գնահատումը տեղեկատվության հավաքումն է այն մասին, թե ուսումնառության ինչպիսի մակարդակի է հասել սովորողը: Այդ տեղեկատվությունը հավաքելու համար կարելի է օգտագործել գնահատման բազմաթիվ միջոցներ: Դրանք կարող են ներառել բազմաթիվ դիտարկումները, գրավոր թեստերը, տնային աշխատանքներ, հետազոտական բնույթի աշխատանքներ, նախագծեր, բանավոր հարցումներ, սովորողի մասին կատարած գրառումների վերլուծությունը: Դրանց մեջ իր ուրույն տեղն ունեն գրավոր թեստերը, որոնք գիտելիքների ստուգման ժամանակակից արդյունավետ եղանակներից են:

Եթե բնորոշելու լինենք թեստը, ապա նրան հատուկ են՝

1. ***Համակարգվածությունը,*** ընդգրկված առաջադրանքները միայն միևնույն առարկայի շուրջ են, նույնիսկ միևնույն թեմայի շրջանակն են ընդգրկում և կազմված են պարզից բարդ աստիճանական զարգացումով
2. ***Հատուկ ձև,*** թեստը հարցերի կամ խնդիրների հավաքածու չէ. Առաջադրանքը հիմնականում ձևակերպվում է որպես ճիշտ կամ սխալ արտահայտություն, որը պատասխանով է պայմանավորված,
3. ***Առաջադրանքի տրամաբանական որոշակիություն.*** Սա նշանակում է, որ թեստային առաջադրանքը երկվության կամ կասկածի առիթ չպետք է տա, այն ունի որոշակի դրական կամ բացասական պատասխան,
4. ***Թեստի առաջադրանքի պատասխանը հակիրճ դատողություն է.*** Ընդ որում այդ ճիշտ պատասխանը նա ընտրում է արդեն տրվածներից: Սա թեստի կարևոր հատկանիշներից մեկն է, պատասխանը արդեն կա, հարցվողը պիտի ընտրի տրվածներից:

5. *Ունի հատուկ կառուցվածք.* Թեստային առաջադրանքների միձև գոյություն ունի հաջորդական կապ. ամեն առաջադրանք բխում է նախորդից և մի տեսակ առավել զարգացնում է արծարծվող թեման:
6. *Հաջողությունը պայմանավորված է փորձարկումով.* Թեստային առաջադրանքի մյուս շատ կարևոր առանձնահատկությունն այն է, որ միայն որոշակի փորձարկումից հետո թեստը կարելի է վստահորեն հաջողված համարել:

Թեստեր կազմելիս անհրաժեշտ է չափելի դարձնել գնահատման ենթակա արդյունքը: Պետք է որոշել, թե. ի՞նչն ենք չափում (սովորողի գիտելիքը, կարողությունը, հմտությունը, առաջընթացը և այլն), նաև հստակեցնել, թե ի՞նչ նպատակով է կատարվում չափումը: Մենք չենք կարող թեստ կազմել առանց հստակ իմանալու, թե ինչ նպատակի համար է այն անհրաժեշտ: Թեստը պետք է համապատասխանի չափման նպատակին: Չափումը կարող է կատարվել տարբեր նպատակներով:

Հիմնական նպատակներն են՝ **ընտրություն** (սովորողների մի սահմանափակ քանակ ընտրելու նպատակով: Օրինակ՝ օժտված երեխաների ընտրություն, օլիմպիադայում սովորողի տեղը որոշելը և այլն), աշակերտի **առաջադիմության արձանագրում, հայտորոշում** (սովորողի ուժեղ և թույլ կողմերի բացահայտում), արժևորում (սովորողի կամ ուսուցչի աշխատանքի կամ ծրագրի արդյունավետության գնահատում), **հաշվետվություն:**

Թեստ կազմելիս պետք է հստակ գիտենալ, թե ու՞մ ի՞նչը պետք է ստուգել և ի՞նչ նպատակի են ծառայելու ստուգման արդյունքները:

Այսօր կրթական բնագավառում թեստային աշխատանքներն ավելի հաճախ են կիրառվում սովորողների գիտելիքների, կարողությունների և հմտությունների ստուգման նպատակով: Թեստը դիտարկվում է որպես չափման գործիք: Ուսումնական գործընթացում թեստերի կիրառումը ունի մի շարք առավելություններ-

- ✓ հնարավորություն է տալիս ուսուցչին փոքր մասերով ստուգել ուսումնական նյութի յուրացումը,
- ✓ կարողանում է արագ գնահատել մեծ թվով սովորողների,
- ✓ նվազեցնում է սուբյեկտիվ գործոնը,
- ✓ հնարավորություն է տալիս պարզելու յուրաքանչյուր սովորողի դժվարությունները՝ շնորհիվ առաջադրանքի փուլային կատարման,
- ✓ պարզելու սովորողի «ցավոտկետը», վերացնելու նկատված թերությունները, նպաստելու սովորողի առաջընթացին:

Թեստը որոշակի նպատակով կազմված, ուղղորդող ցուցումներով հարցերի շարք է, սովորողներին գնահատելու և նրանց ուսումնական գործունեությունը արժևորելու համար:

Հարցը առաջադրանք կատարելու հանձնարարական է, որն ակնկալում է աշակերտի պատասխանը: Այն անհրաժեշտ է ձևակերպել պարզ, հստակ: Հարցը պետք է ունենա միանշանակ պատասխան:

Տարրական դասարաններում թեստեր կազմելիս օգտագործում են հիմնականում հարցերի հետևյալ տեսակները.

- մեկ ճիշտ պատասխանի ընտրությամբ,
- համապատասխանեցման,
- բաց թողածը լրացնելու,
- կարճ պատասխան պահանջող,
- ընդարձակ պատասխան պահանջող,

Հաջողված թեստ ստեղծելու համար կան մի շարք գործոններ, որոնք անպայման պետք է հաշվի առնել: Դրանք են՝ թեստ կազմելու հիմնական սկզբունքներների իմացությունը և առաջադրանքների համակարգի ճիշտ ընտրությունը:

Թեստ կազմելիս պետք է հաշվի առնել հետևյալ պահանջները.

- **Թեստը պետք է լինի հուսալի:**

Հուսալիություն ասելով հասկանում ենք, որ թեստի ստուգման արդյունքները, անկախ հանգամանքներից, պետք է հաստատուն լինեն: Տարբեր պայմաններում, տարբեր ստուգողների կողմից նույն թեստի ստուգման և գնահատման արդյունքները գնահատման նույն սկզբունքները հանդես բերելու դեպքում տարբերություն գրեթե չպետք է լինի:

- **Թեստը պետք է լինի հավաստի:**

Հավաստիություն նշանակում է, որ թեստը պետք է ծառայի իր նպատակին, այսինքն պետք է ստուգի այն գիտելիքներն ու հմտությունները, որոնք նախատեսված էր ստուգել: Հավաստի թեստը ապահովում է կոնկրետ նպատակին հասնելու հաջողությունը: Թեստը հավաստի է, եթե դրա բարդության աստիճանը համապատասխանում է սովորողի պատրաստվածության մակարդակին: Համապատասխանություն նշանակում է, որ միջին պատրաստվածություն ունեցող սովորողի համար թեստը ոչ շատ հեշտ և ոչ էլ շատ դժվար պետք է լինի: Այն պետք է լինի միջին բարդության: Եթե թեստը սովորողի համար շատ հեշտ է, կամ՝ շատ բարդ, նշանակում է թեստը հուսալի չէ:

- **Թեստը պետք է լինի արդյունավետ:**

Արդյունավետ է համարվում այն թեստը, որը արդյունավետ է չափում սովորողի գիտելիքը, կարողություններն ու հմտություններն: Բովանդակության տեսակետից արդյունավետ է այն թեստը, որն ընդգրկում է ստուգվող թեմայի կամ թեմաների հիմնական կարևոր հարցերը: Թեստը արդյունավետ է, եթե թեստի դժվարության աստիճանը համապատասխանում է սովորողի պատրաստվածության մակարդակին:

- **Թեստը պետք է լինի գործնական կամ իրականանալի,** թե՞տեխնիկական, թե' ֆինանսական, թե՞ ժամանակի տեսակետից:

Թեստը կազմելիս շատ կարևոր է առաջադրանքների տիպերի ճիշտ ընտրությունը: Թեստում առաջադրանքները պետք է դասավորվեն պարզից դեպի բարդը սկզբունքով՝ ըստ Բենջամին Ս. Բլումի ճանաչողական վարքի աստիճանակարգի (տաքսոնոմիայի): Ստորև ներկայացված է մտածողության գործընթացը՝ պարզից դեպի բարդը սկզբունքով:

Թեստը կազմելիս առաջադրանքները ներառվում են գիտելիքի պարզ իմացություն, ըմբռնում, կիրառում և ավարտվում բարձրակարգ ճանաչողական հմտություններով' վերլուծություն, համադրում եւ արժևորում:

Արժևորում
Համադրում
Վերլուծություն
Կիրառում
Ըմբռնում
Գիտելիք

Գիտելիք, սովորողը կարող է հիշել ուսուցման ընթացքում ստացած գիտելիքը կամ տեղեկատվությունը: Այն կարող է լինել կանոնների, դիագրամների, փաստերի և այլի տեսքով:

Ընկալում, սովորողը կարող է հասկանալ ստացած գիտելիքը կամ տեղեկատվությունը և մեկնաբանել սեփական բառերով, օրինակ բերելու միջոցով և այլն:

Կիրառում, սովորողը կարող է կիրառել գիտելիքը՝ կամ տեղեկատվությունը՝ օգտագործելով այն կոնկրետ գործողությունների մեջ: Դրանք կարող են լինել հաշվելը, գրելը, խնդիր լուծելը, մեծությունների համեմատելը և այլն:

Վերլուծություն. Սովորողը կարող է վերլուծել գիտելիքը կամ տեղեկատվությունը, տրոհել մասերի' գտնել նրանց միջեւ եղած կապը, առանձնացնել կարևոր և ոչ կարևոր տեղեկատվությունները:

Համադրում, սովորողը կարող է օգտագործել տարբեր աղբյուրներից ստացած գիտելիքը կամ տեղեկատվությունը:

Արժևորում, սովորողը կարող է գնահատել գիտելիքը կամ տեղեկատվությունը՝ կատարելով դատողություններ, եզրահանգումներ:

Թեստը պետք է ունենա հստակ հատկորոշիչները: Դրանք կազմում են հարցարանի տեսական հենքը և տեղեկություն են տալիս հետևյալ հարցերի վերաբերյալ.

- ո՞ր դասարանի համար է նախատեսված
- ի՞նչ նպատակ է հետապնդում, որ թեմայից կամ թեմանեից են ստուգվում սովորողի գիտելիքներն ու հմտություններ,
- առաջադրանքների քանակը,
- թեստի գնահատման առավելագույն միավորը,
- հատկացված ժամանակը,
- • գնահատման չափանիշների միավորային աղյուսակ, որտեղ տրվում է յուրաքանչյուր առաջադրանքի համարը, այդ առաջադրանքի առավելագույն միավորը և դրա գնահատման յուրաքանչյուր քայլի միավորը:

Թեստը կազմվում է ըստ հատկորոշիչների, որտեղ ստուգվող թեմաները պետք է լինեն հստակ, ստուգվող գիտելիքը և հմտությունները խիստ որոշակի:

Կախված նպատակից կիրառվում են տարբեր տեսակի թեստեր, որոնք կարող են լինել տարբեր բովանդակությամբ, կառուցվածքով, գնահատման ձևով:

Կիրառվում են թեստերի հետևյալ տեսակները.

- **ընդհանուր գիտելիքների ստուգում**
- **հայտորոշիչ**
- **ամփոփիչ**
- **տեղակայման թեստեր**

Գլուխ 3

Հայտորոշիչ թեստ

Հայտորոշիչ թեստերը հիմնականում նպատակ ունեն խթանել և օգնել սովորողին բարելավելու իր առաջադիմությունը: Դրանք հնարավորություն են տալիս պարզել ինչպես յուրաքանչյուր սովորողի, այնպես էլ ամբողջ դասարանի ձեռքբերումներն ու բացթողումները՝ ուսումնական գործընթացում ապահովելով հետադարձ կապ, և բարելավել ուսուցումը:

Հայտորոշիչ թեստը ուսուցանող գնահատման առանձնահատուկ տեսակ է: Այն կիրառվում է ուսուցման փուլի սկզբում կամ ընթացքում՝ սովորողների կարիքները հստակեցնելու և ուսուցման գործընթացը բարելավելու նպատակով:

Ուսուցանող նպատակով կարելի է օգտագործել **կարճ ժամանակի համար նախատեսվող հայտորոշիչ թեստեր**, որոնց արդյունքները միավորներով չեն գնահատվում: Դրանց իրական նպատակը ուսումնասիրած թեմայից կամ թեմայի մի մասից սովրողների ոչ թե միավորային գնահատումն է, այլ յուրաքանչյուր սովորողի կողմից նյութի յուրացման աստիճանի պարզումը, նյութը վատ յուրացրած կամ չյուրացրած սովորողների բացահայտումը' նրանց գիտելիքների, կարողությունների ու հմտությունների մասին տեղեկություն ստանալն է, որը հնարավորություն կտա ժամանակին կատարել անհրաժեշտ շտկումներ և բարելավել նրանց ուսուցումը, նպաստել նրանց առաջընթացին: Այն պետք է նաև ուսուցչին, որպեսզի բացահայտի բացթողումները և կարողանա ճիշտ պլանավորել իր հետագա աշխատանքը:

Կարճ ժամանակի համար նախատեսվող հայտորոշիչ թեստերն ավելի ճկուն են, և դրանց արդյունքներն ավելի օբյեկտիվ, հուսալի և ար դար են վերլուծությունների համար: Նման թեստերում ընդգրկվող առաջադրանքների հարցերը լինում են հիմնականում հետևյալ տեսակների՝

- ընտրովի պատասխանով,
- կարճ պատասխանով,
- համապատասխանեցման,
- բաց թողածը լրացնելու հարցերով:

Հայտորոշիչ թեստը ունի հետևյալ առանձնահատկությունները.

- կիրառվում է ուսումնառության ընթացքում,
- կարճ ժամանակի համար է նախատեսված' 15 – 20 րոպե
- ստուգում է մեկ հիմնական գիտելիք կամ ունակություն,
- բոլոր առաջադրանքներն ուղղված են նույն գիտելիքի, կարողության կամ հմտության ստուգմանը,
- առաջադրանքների տեսակները բխում են տվյալ թեմայի ուսուցման նպատակից,
- հարցերը ձևակերպված են կարճ, պարզ եւ մուստչելի,
- առաջադրանքները միջին բարդության աստիճան ունեն (1-ին և 2-րդ մակարդակ), այնպիսին են, որ դրանք հաղթահարելի են սովորողների մեծ մասի կողմից,
- արդյունքները արագ են ստուգվում և արժևորվում,

- արդյունքները թույլ են տալիս մեկնաբանել սովորողի առաջադիմության աստիճանն ու կարիքները,
- արդյունքների վերլուծությունից, մեկնաբանությունից հետևում է օժանդակություն ըստ անհրաժեշտության:

Հայտորոշիչ թեստը տրվում են յուրաքանչյուր սովորողի կողմից տվյալ դասանյութի յուրացման աստիճանը պարզելու և նրա հետ հետադարձ կապի հաստատման նպատակով: Գրավոր կամ բանավոր արժեվորման ժամանակ կարևորվում են ուսուցչի հետևությունները, մեկնաբանությունները: Աշխատանքը վերլուծելիս անհրաժեշտ է յուրաքանչյուր սովորողի ներկայացվի նյութի յուրացման իր մակարդակը, նկատված բացթողումները:

Այդ վերլուծությունները և մեկնաբանությունները պետք է այնպես արվեն, որ օգնեն սովորողին բարելավելու իր արդյունքները, ուսուցչի, սովորողի կամ ընկերների կողմից տանել համապատասխան աշխատանք՝ նկատված թերությունները շտկելու, ուսուցումը խթանելու համար:

Հայտորոշիչ թեստի արդյունքների գնահատման օրինակ

Դիցուք ուսուցիչը դասարանին հանձնարարել է 10 հարցից բաղկացած հայտորոշիչ թեստ՝ մատուցված թեմայի հիմնական հասկացությունների յուրացումը ստուգելու նպատակով: Եթե աշակերտների մեծ մասը ճիշտ են պատասխանել 8, 9 կամ10 հարցի, ապա նա գտնում է, որ նրանք մատուցված նյութը յուրացրել են հիմնավորապես: Եթե որոշ աշակերտներ ունեն 5, 6 կամ 7 ճիշտ պատասխան, ապա ուսուցիչը որոշում է նրանց հետ կազմակերպել լրացուցիչ ուսումնական աշխատանք, որպեսզի նրանք էլ հասնեն յուրացման բարձր աստիճանի: 5-ից պակաս ճիշտ պատասխան ունեցող աշակերտները՝ վատ են յուրացրել նյութը:Նրանց համար ուսուցիչը պատրաստվում է ավելի մատչելի բացատրել նյութը:

Հայտորոշիչ թեստ_Մաթեմատիկա/ 2_րդ դասարան/ Բաժանում

1.Ընտրի՞ր բաժանման գործողությամբ տարբերակները:

□ 28:4=7 □ 16:4=4

□ 4•7=28. □ 63>7

2.Կարդա՞ և ընտրի՞ր ճշմարիտ հավասարությունը:

Տասներկուսը բաժանած երկուսի հավասար է վեցի:

□ 12:2=6 □ 12•2=6 □ 17:4=6

3.Գրի՛ր ճիշտ պատասխանները:

10:5=2

Բաժանելի_ □

Բաժանարար_ □

Քանորդ_ □

4.Գծի՛ր 6 սմ երկարություն ունեցող մի հատված և բաժանի՛ր այն 2 հավասար մասերի:

•Յուրաքանչյուր մասի երկարությունը հավասար է □ սմ_ի:

5.Օգտվելով տրված բազմապատկման հավասարությունից՝ կազմի՛ր բաժանման արտահայտություն:

2•10=20

1.

2.

6.Գտի՛ր արտահայտությունների արժեքները:

1.7:1=□

2.7:7=□

7.Համեմատի՛ր՝ դնելով >, < կամ = նշան:

15:5□50:10

8.Լուծի՞ր խնդիրը:

8լ մեղրը հավասարաչափ լցրեցին 4 տակառների մեջ:Քանի՞ լիտր մեղր կա յուրաքանչյուր տակառում:

Լուծում

Պատասխան՝ :

9.Գտի՞ր արտահայտության արժեքը:

10:2+52

Պատասխան՝

Հայտորոշիչ թեստ/Մայրենի/2-րդ դասարան/ Հոմանիշ բառեր

1.Գտի՞ր՝ որոնք են ...արահետ,,, բառի հոմանիշները:

o արմատ

o ափսե

o շավիղ

o կածան

2.Ցու՞յց տուր՝ գրված բառազույգերից որն է ,,,ավելորդ...:

o գիտուն-ուժեղ

o սոված-քաղցած

o ուղի-ճանապարհ

3.Գտի՞ր՝ որ շարքի բոլոր բառերն են հոմանիշներ:

o գոռալ, ճչալ, երգել

o մրրիկ, փոթորիկ, բուք

4.Ո՞ր բառը մյուս բոլոր բառերի հոմանիշը չէ:

o թռչել o ճախրել

o ճանկել o սավառնել

5.Նշի՛ր՝ որ շարքում կտեղադրես ,,,բյուր,,, բառը:

o բուրմունք, հոտ, հոտավետ

o շատ, անհամար, բազում

6.Ցու՛յց տուր՝ քանի բառ կա տրված բառաշարքում,որոնք հոմանիշ են ,,,ուրախ,,, բառին:

o 4

o 5

o 3

7.Ձախ բառասյունակից փնտրի՛ր աջ բառասյունակի բառերից մեկի հոմանիշը:Գրի՛ր այդ հոմանիշ բառերը:

8.Որոշի՛ր՝ որ թվանշանը կրող փուչիկների վրա գրված բառերն են հոմանիշներ:

o 1,2

o 4,5

o 3,4

Եզրակացություն

Այսպիսով՝ թեստերը միջոցներ են, որոնցով ստուգվում և գնահատում են սովորողների գիտելիքները, կարողություններն ու հմտությունները: Ցանկացած թեստ պետք է նպաստի սովորողի ուսուցման բարելավմանը և առաջընթացին: Թեստերը որպես չափման գործիք, լավագույնս կծառայեն նպատակին,եթե կազմվեն նպատակային, առարկայական չափորոշչի և ծրագրային նյութին համապատասխան, անցնեն փորձաքննություն, հաշվի առնվեն թեստ կազմելու պահանջները և միջազգային փորձը:Ես անպայման կկիրառեմ նշված հայտորոշիչ թեստերը: Կարծում եմ, հայտորոշիչ թեստի կարևորությունը, բացի գիտելիքների բացահայտումից, պակաս կարևոր չէ դաստիարակչական առումով. աշակերտները սովորում են ձերբազատվել որևէ աշխատանքի համար անպայման գնահատվելու «մոլուցքից», որի արդյունքում մի տեսակ «ստվերի» տակ է մնում գիտելիքի չափի կարևորությունը:

Ինչպես տեսանք՝ հայտորոշիչ թեստի ճիշտ կիրառման դեպքում հնարավոր է հասնել սովորողի ուսումնառության և բազում կարողունակությունների զարգացմանը,նպաստել ուսուցման փուլի սկզբում կամ ընթացքում նյութի յուրացման աստիճանը որոշելուն,որը կատարվում է սովորողների կարիքները հստակեցնելու և ուսուցման գործընթացը բարելավելու նպատակով:

Այսպիսով՝ հայտորոշիչ թեստը որպես ուսուցման արդյունքների ստուգման և ձևավորող գնահատման միջոց, ունի իր դրական ազդեցությունը նյութի յուրացման բարելավման վրա:Ապահովում է ուսումնական նյութի բովանդակության ավելի լավ յուրացում ,ակտիվանում է կրթական մոտիվացիան,դրվում է օբյեկտիվ ինքնագնահատականի ձևավորման հիմքը:

Այսպիսով՝ թեստը միտված է բարելավված ուսուցմանն ու ուսումնառությանը:

Օգտագործված գրականության ցանկ

1. Սովորողների ընթացիկ գնահատման մեթոդաբանություն,Երևան 2008:

2. 0. Միքայելյան, Ս. Միքայելյան, Ընթացիկ գնահատման նոր համակարգը որպես կրթության որակի բարելավման միջոց, Երևան 2010:

3. Ս. Վարդումյան և ուրիշներ, ժամանակակից մանկավարժական մոտեցումներ, Երևան,

2009:

4. «Մաթեմատիկան դպրոցում» գիտամեթոդական ամսագիր, Երևան, 2013թ.

5. Ընթացիկ գնահատումների մաթեմատիկայի հարցաշարերի նմուշների ժողովածու ՀՀ ԿԳ նախարարություն, կրթական ծրագրերի կենտրոն, կրթության ազգային ինստիտուտ, Նախագիծ, Երևան, 2007 թ.: